Հաստատված է
Պետության և իրավունքի
տեսության և սահմանադրական
իրավունքի ամբիոնի 28. 08. 2017 թ.
նիստում (արձ. թիվ 1)
Ամբիոնի պետ՝ .....
(ստորագրություն)
.....
(ամիս ամսաթիվ)

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ
ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

(Կազմվել է ուսումնական ծրագրի նախագծի հիման վրա)

ԱՌԱՐԿԱՅԻ ԱՆՎԱՆՈՒՄ		Հայաստանի պետության և իրավունքի պատմություն
ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԻՉ		
ՖԱԿՈՒԼՏԵՏ		Իրավագիտություն, անվճար ուսուցում
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ		Իրավագիտություն
ԱՄԲԻՈՆ		Պետության եվ իրավունքի տեսության եվ սահմանադրական իրավունքի ամբիոն E-mail: pitambion@mail.ru
ՀԵՂԻՆԱԿ/ՆԵՐ		Է. Չիբուխչյան E-mail: rmarandyan@mail.ru, հեռ. 099 20 20 81
ՈՒՍ.ՏԱՐԻ/ԿԻՍԱՄՅԱԿ		1-ին կուրս, 2-րդ կիսամյակ
ԿՐԹԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆ		բակալավր

ԿՐԵԴԻՏՆԵՐ		**3 (երեք)**
ԴԱՍԱԺԱՄԵՐԻ ԲԱՇԽՈՒՄ ԵՎ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՁԵՎԵՐԸ		«Հայաստանի պետության և իրավունքի պատմություն» դասընթացի ընդհանուր ծավալը կազմում է 90 ժամ, որից 36 ժամ դասախոսություն, 18 ժամ սեմինար պարապմունք, 36 ժամ ինքնուրույն աշխատանք: Ինքնուրույն աշխատանքի համար նախատեսված ժամերին սովորողը կատարում է գրականության ընթերցում և մշակում, վերլուծական, հետազոտական աշխատանք, դասախոսի հանձնարարությամբ կարող է գրել ռեֆերատներ և էսսեներ, պատրաստվում է հաջորդ դասին: Լսարանային դասերը կայանում են շաբաթը երեք լսարանային ժամ տևողությամբ: Դասընթացն ավարտվում է կիսամյակի վերջում քննություն հանձնելով:
ՄՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ		Դասընթացը կառուցվում է «Արտասահմանյան երկրների պետության և իրավունքի պատմություն» առարկայից ձեռք բերված գիտելիքների հի-

		ման վրա:
ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ		«Հայաստանի պետության և իրավունքի պատմություն» դասընթացի շրջանակներում ուսումնասիրվում են «Հայաստանի պետության և իրավունքի պատմություն» առարկայի ընդհանուր բնութագիրը, տոհմատիրական կարգերի քայքայումը և հնագույն պետական կազմավորումները Հայկական լեռնաշխարհում, հնագույն, հին և միջնադարյան Հայաստանի իրավունքի հուշարձանները, Ուրարտական պետության առանձնահատկությունները, հելլենիստական Հայաստանի հասարակական կարգը, կառավարման համակարգը և իրավունքը, ավատատիրական Հայաստանի պետության և իրավունքի առանձնահատկություններն ըստ պատմական տարբեր ենթափուլերի և իրավական ոլորտների, հայոց պետականության վերականգնման ծրագրերը, Արևելյան և Արևմտյան Հայաստանում անցկացված ռեֆորմները, Հայաստանի Առաջին Հանրապետության, Խորհրդային Հայաստանի և Հայաստանի Երրորդ Հանրապետության պետահիրավական համակարգերի առանձնահատկությունները:
ՆՊԱՏԱԿ **ԽՆԴԻՐ/ՆԵՐ**		Դասընթացի նպատակն է սովորողներին հաղորդել գիտելիքներ և ձևավորել կարողություններ «Հայաստանի պետության և իրավունքի պատմություն» առարկայի ընդհանուր բնութագրի, Հայկական լեռնաշխարհում տոհմատիրական կարգերի քայքայման և հնագույն պետական կազմավորումների, հնագույն, հին և միջնադարյան Հայաստանի իրավունքի հուշարձանների, Ուրարտական պետության առանձնահատկությունների, հելլենիստական Հայաստանի հասարակական կարգի, կառավարման համակարգի և իրավունքի, ըստ պատմական տարբեր ենթափուլերի և իրավական ոլորտների՝ ավատատիրական Հայաստանի պետության և իրավունքի առանձնահատկությունների, հայոց պետականության վերականգնման ծրագրերի, Արևելյան և Արևմտյան Հայաստանում անցկացված ռեֆորմների, Հայաստանի Առաջին Հանրապետության, Խորհրդային Հայաստանի և Հայաստանի Երրորդ Հանրապետության պետահիրավական համակարգերի առանձնահատկությունների վերաբերյալ: Դասընթացի խնդիրներն են՝ • Ներկայացնել «Հայաստանի պետության և իրավունքի պատմություն» առարկայի ընդհանուր բնութագիրը, Հայկական լեռնաշխարհում տոհմատիրական կարգերի քայքայման և հնագույն պետական կազմավորումների առանձնահատկությունները, • Պարզաբանել հնագույն, հին և միջնադարյան Հայաստանի իրավունքի հուշարձանների, Ուրարտական պետության բնորոշ գծերը, • Վերլուծել հելլենիստական Հայաստանի հասարակական կարգի, կառավարման համակարգի և իրավունքի, ըստ պատմական տարբեր ենթափուլերի և իրավական ոլորտների՝ ավատատիրական Հայաստանի պետության և իրավունքի առանձնահատկությունները, • Ներկայացնել հայոց պետականության վերականգնման ծրագրերը, Արևելյան և Արևմտյան Հայաստանում անցկացված ռեֆորմները, • Ներկայացնել Հայաստանի Առաջին Հանրապետության, Խորհրդային Հայաստանի և Հայաստանի Երրորդ Հանրապետության պետահիրավական համակարգերի առանձնահատկությունները:
ԿՐԹԱԿԱՆ ԵԼՔԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ ***Կարողանա՝***		• Բնորոշել «Հայաստանի պետության և իրավունքի պատմություն» դասընթացի առարկան, • Վերլուծել Հայկական լեռնաշխարհում տոհմատիրական կարգերի քայքայման և հնագույն պետական կազմավորումների առանձնահատկու-

		թյունները, • Մանրամասնել հնագույն, հին և միջնադարյան Հայաստանի իրավունքի հուշարձանների բնորոշ գծերը, • Վերլուծել Ուրարտական պետության հասարակական կարգի, պետության և իրավունքի առանձնահատկությունները, • Տիրապետել հելլենիստական Հայաստանի հասարակական կարգի, կառավարման համակարգի և իրավունքի, ըստ պատմական տարբեր ենթափուլերի և իրավական ոլորտների՝ ավատատիրական Հայաստանի պետության և իրավունքի առանձնահատկություններին, • Ներկայացնել և վերլուծել հայոց պետականության վերականգնման ծրագրերը, Արևելյան և Արևմտյան Հայաստանում անցկացված ռեֆորմները, • Տիրապետել Հայաստանի Առաջին Հանրապետության, Խորհրդային Հայաստանի և Հայաստանի Երրորդ Հանրապետության պետաիրավական համակարգերի առանձնահատկություններին:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ		
Հիմնական		1. Է. Վ. Պողոսյան, Հայաստանի պետության և իրավունքի պատմություն (դասախոսություններ), Երևան, 2006: 2. Խ. Սամուելյան, Հին հայ իրավունքի պատմություն, հ. 1. Երևան, 1939: 3. Հայ ժողովրդի պատմություն. հատ 1-3, 7, Երևան, 1963-1983 թթ.: 4. Ա. Ա. Թովմասյան, Հին և միջնադարյան հայ քրեական իրավունք, Երևան, 1962: 5. Կանոնագիրք Հայոց, աշխատասիրությամբ Վ. Հակոբյանի, Ա, Երևան, 1964: 6. Կանոնագիրք Հայոց, աշխատասիրությամբ Վ. Հակոբյանի, Բ, Երևան, 1971: 7. Դավիթ Ալավկա որդու կանոնները, աշխատասիրությամբ պրոֆ. Ա. Աբրահամյանի, «Էջմիածին» ամսագիր, 1953: 8. Ավագյան Ռ. Ա. Հայ իրավական մտքի գանձարան (մ.թ.ա. 9-մ.թ.14 դդ.), Երևան, 2001: 9. Армянские источники о монголах, извлечения из рукописей XIII— XIV вв., перевод и примечания А. Г. Галстяна, Издательство Восточной литературы, Москва, 1962. 10. «Безымянная летопись», предисловие и примечания Г. Манвелян и Г. Абрамяна, Ереван, 1940. 11. Ваграм Рабуни, История Рубенидов, Париж, 1859. 12. Вардан Вардапет, Всеобщая история, Венеция, 1862. 13. Гетум II, Летопись (См. «Мелкие хроники XIII—XVIII вв./, т. I, Ереван, 1951). 14. Гетум Патмич, История монголов, перевод М. Авгеряна, Венеция, 1842. 15. Грнгор Аканеци (Акнерци), История народа стрелков, ранее называемый Магакия Инок. Текст и английский перевод. Кембридж, 1954. 16. Давид Багишеци, Летопись (см. Мелкие хроники, том II). 17. Иоанн Дарделл, Летопись Армении, СПб, 1891. 18. Киракос Гандзакеци, История Армении, Тифлис, 1909. 19. Куртян А., Новонайденный документ из кодекса Антиохийских Ассиз, журнал «Базмавеп», 1956, №№ 1—12. 20. Матевос Ураеци, Летопись, Вагаршапат, 1898. 21. Мелкие хроники XIII—XVIII вв., т. I, I951, т. II, 1956, составил В. Акопян, Ереван. 22. Микаел Асори, Летопись, Иерусалим, 1871.

23. Мхитар Айриванеци, История Армении, СПб, 1867.
24. Саркисян Г., Главный каталог армянских рукописей Матенадарана Мхинтаристов, Венеция, том I, 1914, том. I 1914, том II, 1924.
25. Овсенян Г., Ишатакаранк (Памятные чашки с V пека до 1250 года), Антилиас, 1951.
26. Смбат Спарапет, Летопись, Париж, 1859. Спарапет, Летопись, Венеция, 1956.
27. Степанос Орбелян, История Снсакана, Париж, 1859.
28. Ташян А., Каталог рукописей Матенадарана Мхитаристов, Вена, 1895.
29. Хачикян Л. Назидательное послание Константина Бардзрбердского «Банбер Матенадарани», 1958, № 4.
30. Абегян М. Х. История древнеармянекой литературы, книга первая, Ереван, 1944, книга вторая, Ереван, 1946.
31. Абрамян А., Летопись Давида Батишеци и ее значение в армянской литературе, журнал «Эчмиадзин», 1946, №№ 11—12.
32. Адонц Н., Исторические исследования, Париж, 1948.
33. Аконян Н., Священник Григор Акнерци — летописец истории монголов, журнал «Андес Амеоря», 1948, июль-август.
34. Акомян Григор, Нерсес Шнорали, Ереван, 19(54. Григор, Нерсес Ламбронаци, Ереван, 1971.
35. Алишан Г., Сисван, Венеция, 1885.
36. Алишан Г., Ширак, Венеция, 1890.
37. Алпояджян А., История эмиграции армян, т. I, 1941, т. II, 1955 Каир.
38. Анасян А. Армянская библиография V—XVIII вв., Пропан, 1959,т 1.
39. «Арарат», журнал, 1899, II год, стр. 90.

Լրացուցիչ

1. Մխիթար Գոշի Դատաստանագիրք Հայոց, աշխատասիրությամբ Վահան Բաստամյանցի, Վաղարշապատ, 1880:
2. Ներսէս Լամբրոնացի, Թուղթ առ քրիստոսազօր իշխողն մեր իննակալութեամբ Լևոն, ի գիրս Ընտիր մատենագիրք, Գրիգոր կաթողիկոս Տղա, Ներսէս Լամբրոնացի, Վենետիկ, 1865:
3. Դատաստանագիրք Սմբատ իշխանի (Գունդստաբլի), Էջմիածին, 1918:
4. Դատաստանագիրք Աստրախանի հայոց, աշխատասիրությամբ՝ Ֆ. Պողոսյանի, Երևան, 1967:
5. Մխիթար Գոշ, Գիրք դատաստանի, աշխատասիրությամբ Խոսրով Թորոսյանի, Երևան, 1975:
6. Հակոբ Շահամիրյան, Ոռոգայթ-փառաց, Մադրաս 1773 թ. կամ Թիֆլիս, 1913:
7. Астурян, Очерк по истории армянского права проф. Карста, журнал «Базмавеп», 1907.
8. Ачарян Р., Словарь армянских личных имен, т. I, Ереван, 1942, т. II, 1944, т. III, 1946, т. IV, 1948.
9. Бабаян Л., Налоговая система в Армении в период монгольского владычества, «Известия» АН Арм. ССР, .1ST» 7, Общественные науки, Ереван, 1948, № 7.
10. Галстян А., История армянской дипломатии монгольского периода, Ленинакан, 1945.
11. Галстян А. Смбат Спарапет, Айпетрат, Ереван, 1901.
12. Манандян Я. А., История Армении в эпоху тюрко-татарских нашествий, (на правах рукописи), Ереван, 1922.
13. Манандян Я., Критический обзор истории армянского народа, т. III, Ереван, 1952.
14. Ормапян М., Азгапатум, Константинополь, том. I, 1913, том II, 1914.
15. Товмасян А., Армянское уголовное право древних и средних веков,

Ереван 1962.
16. Чамчян М., История Армении, т. II, Венеция, 1785, т. III, Венеция, 1786.
17. Армянский Судебник Мхитара Гоша, перевод с древнеармянского А. А. Паповяна, редакция, вступительная статья и примечания Б. А. Арутюняна, Ереван, 1954.
18. Всеобщая история Вардана Великого, перевод с армянского Н. Эмина, Москва, 1861.
19. Ибн-ал-Асир Тарих-ал-Камиль, перевод Жузе, Баку, 1940.
20. Ильминский, Выписки из Ибн-ал-атира о первом нашествии татар на кавказские и черноморские страны с 1220 по 1224 годы («Ученые записки Российской Академии наук», т. II, выпуск, 4, СПб, 1854).
21. История монголов по армянским источникам, выпуск I, заключающий в себе извлечения из трудов Вардана, Стефана Орбеляна и коннетабля Смбата, перевод и объяснения К. П. Патканова, СПб, 1873.
22. История монголов по армянским источникам, выпуск II, заключающий в себе извлечения из истории Киракоса Гандзакеци, перевод и объяснения К. П. Патканова, СПб, 1874.
23. Карпини.Дж.дель Плапо, История монголов— в кн.: Карпини Дж.дель Плано, «История монголов», Рубрук «Путешествие в восточные страны», редакция, вступительная статья и примечания Н. П. Шастиной, Москва, 1957.
24. Рашид-ад-дин, «Сборник Летописей», т. III, перевод с персидского А. К. Арендса, Москва-Ленинград, 1940.
25. Рубрук «Путешествие в восточные страны»—в кн.: Карпини Дж.дель Плано, «История монголов», Рубрук «Путешествие в восточные страны», редакция, вступительная статья и примечания Н. П. Шасиной, Москва, 1957.
26. Бабаян Л., К вопросу о закрепощении крестьян в Армении до монгольского периода, Ереван, 1961.
27. Гордлевский Вл. Государство сельджукидов Малой Азии, Москва-Ленинград, 1941.
28. Греков Б. и Якубовский А., Золотая Орда и ее падение, Москва-Ленинград, 1950.
29. Манандян А. Я., О торговле в городах Армении, Ереван, 1954.
30. Марр Н., Надгробный камень из Семиречья, с армяно-сирийской надписью 1323 года, СПб, 1894.
31. Микаелян Г. История Киликийского армянского государства. Ереван, 1952.
32. Мирный С. М. «Le flor des estoires de terres d'Orienl» Гайтона как историко-географнческий источник по Востоку и по истории монголов», Советское Востоковедение, 1956, №5.
33. Насонов А. Н., Монголы и Русь (История татарской политики на Руси) Москва-Ленинград, 1940.
34. Орбели И. А., Хасан Джалал, князь Хаченскнй, «Известия Академии наук, СПб, серия IV, 1909, № 6.
35. Смбат Спарапет, Судебник, составление текста, перевод с древнеармянского, предисловие и примечания А. Г. Галстяна, Ереван, 1958, (на русском и армянском языках).
36. Сукиасяи, История Киликийского армянского государства и права (X1-XIV вв.), Ереван, 1969.
37. Тер-Аветисян, Автограф Иоанна Ванакана Тавушского, армянского писателя монгольской эпохи, Тифлис, 1926.
38. Тизенгаузен В., Сборник материалов, относящихся к истории Золотой Орды, т. II, Москва-Ленинград, 1941.
39. «Хронологическая история», составлена отцом Мхитаром, нардапетом Айриванским, перевод и примечания К. П. Патканова, СПб, 1869.

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐ ԵՎ ԿՇԻՌ		Քննություն («Գերազանց», «Լավ», «Բավարար» կամ «Անբավարար»):
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ / ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ		Սովորողը դասընթացից կարող է հանդես բերել մինչև 100% (ստուգված) առաջադիմություն: Սովորողների գիտելիքները, ունակությունները և հմտությունները գնահատվում են «Գերազանց», «Լավ», «Բավարար» կամ «Անբավարար»: Սովորողների գիտելիքները գնահատվում են հետևյալ չափանիշներով՝ ա) «Գերազանց», եթե ունկնդիրը խոր և հիմնավոր է յուրացրել ամբողջ ծրագրային նյութը, սպառիչ, հաջորդական, գրագետ ու տրամաբանորեն կառուցված է շարադրում այն, չի դժվարանում պատասխանել, երբ ձևափոխվում է առաջադրանքը, ճիշտ է հիմնավորում պատասխանը, ընդունակ է ինքնուրույն ընդհանրացնել և շարադրել նյութը՝ սխալներ թույլ չտալով. բ) «Լավ», եթե սովորողը հիմնավոր գիտի ծրագրային նյութը, գրագետ է և ըստ էության շարադրում է այն, հարցին պատասխանելիս թույլ չի տալիս էական անճշտություններ, կարողանում է տեսական դրույթները ճիշտ տեղայնացնել կոնկրետ օրինակներում. գ) «Բավարար», եթե սովորողը յուրացրել է միայն հիմնական նյութը, բայց չգիտի դրա առանձին մանրամասները, թույլ է տալիս անճշտություններ, ոչ ճիշտ ձևակերպումներ, խախտում է ուսումնական նյութի շարադրման հաջորդականությունը. դ) «Անբավարար», եթե սովորողը չգիտի ծրագրային նյութի զգալի մասը, թույլ է տալիս էական սխալներ:
ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ		Դասապլանի որևէ փոփոխություն նախօրոք կտեղեկացվի սովորողին:
Ներկայություն		Սովորողի՝ դասերին ներկայությունը բխում է նրա իսկ շահերից, քանի որ ներկայությունը ենթադրում է ունկնդրում, մասնակցություն քննարկումներին, չհասկացված կամ վատ հասկացված խնդիրների պարզաբանում, ինքնուրույն աշխատանքների հանձնում: Սովորողն այս դեպքում հնարավորություն է ունենում լսել ոչ միայն ծրագրային նյութը, այլև՝ մասնակցել քննարկումներին, բանավեճերին, անել ինքնուրույն դատողություններ և հայտնել սեփական տեսակետը:
Գրավոր աշխատանքներին ներկայացվող պահանջներ		Գրավոր աշխատանքների ժամանակ արգելվում է ծածկագրերից օգտվելը: Ծածկագրի հայտնաբերման դեպքում աշխատանքը գնահատվում է զրո միավոր:
Ինքնուրույն և գործնական աշխատանքներ		Ինքնուրույն աշխատանքները անհրաժեշտ է կատարել առանց կողմնակի միջամտության և հանձնել դրանք նշված ժամանակահատվածում: Ինքնուրույն աշխատանքում արգելվում է գրագողությունը: Այլոց մտքերը օգտագործելու դեպքում սովորողը պարտավոր է նշել աղբյուրը ըստ ընդունված ակադեմիական ձևաչափի:

ԹԵՄԱՏԻԿ ՏՐՈՀՄԱՆ ՔԱՐՏԵԶ

Թեմա 1 **«Հայաստանի պետության և իրավունքի պատմություն» առարկան և նրա խնդիրները** **(2 ժամ դասախոսություն)**	
Թեմայի հարցերը	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Հայաստանի պետության և իրավունքի պատմությունը որպես իրավաբանական գիտություն և նրա առարկան: 2. Հայաստանի պետության և իրավունքի պատմության կապը մյուս իրավաբանական գիտությունների հետ: 3. Հայաստանի պետության և իրավունքի պատմության առարկայի հիմնական հասկացությունները, կատեգորիաները, ուսումնասիրման մեթոդները, շրջաբաժանումը:	Հարցեր 1-3 – ներկայացվում է դասախոսություն՝ սովորողների ուշադրությունը հրավիրելով առանցքային հարցերի վրա: Հարց 2 – ինքնուրույն աշխատանք. սովորողները ծանոթանում են գրականությանը և առավել խորը ուսումնասիրում Հայաստանի պետության և իրավունքի պատմության կապը մյուս իրավաբանական գիտությունների հետ:

Թեմա 2 **Իրավունքի և պետության ծագումը Հայկական լեռնաշխարհում տոհմատիրությունից դասակարգային հասարակության անցման ընթացում** **(2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար պարապունք)**	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Տոհմատիրական կարգերի քայքայումը և մասնավոր սեփականության առաջացումը հայկական լեռնաշխարհում: Ռազմական դեմոկրատիա: 2. Հնագույն պետական կազմավորումները և նրանց հասարակական կարգը: 3. Պետության և իրավունքի ծագումը Հայկական լեռնաշխարհում:	Հարցեր 1-3 – ներկայացվում է դասախոսություն: Հարց 2 – ինքնուրույն աշխատանք. սովորողները ծանոթանում են գրականությանը՝ հնագույն հայկական պետական կազմավորումների և նրանց հասարակական կարգի վերաբերյալ ավելի խորը գիտելիքներ ձեռք բերելու համար: Հարցեր 1-3 – անցկացվում է սեմինար պարապմունք, որի ընթացքում սովորողները ներկայացնում են հայկական լեռնաշխարհում տոհմատիրական կարգերի քայքայումը, մասնավոր սեփականության առաջացումը, հնագույն պետական կազմավորումները և նրանց հասարակական կարգը, պետության և իրավունքի ծագումը Հայկական լեռնաշխարհում, կատարվում է դրանց խմբային քննարկում: Սովորողները ներկայացնում են ինքնուրույն աշխատանքի արդյունքները:

Թեմա 3 **Հնագույն, հին և միջնադարյան Հայաստանի իրավունքի հուշարձանների համակարգումը** **(2 ժամ դասախոսություն)**	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Սովորութային իրավունքը որպես պոզիտիվ իրավունքի նախնական աղբյուր: 2. Հռոմեա-բյուզանդական իրավունքը: 3. Հնագույն, հին ու միջնադարյան Հայաստանի իրավունքի հուշարձանների ընդհանուր բնութագիրն ու համակարգումը:	Հարցեր 1- 3 - անցկացվում է դասախոսություն: Հարց 1 – ինքնուրույն աշխատանք: Սովորողներն ուսումնասիրում են հարցին առնչվող գրականությունը և առավել խորը հետազոտում սովորութային իրավունքի՝ որպես պոզիտիվ իրավունքի նախնական աղբյուրի առավել բնութա-

	գրական առանձնահատկությունները:

Թեմա 4 **Ուրարտուի հասարակական կարգը, պետությունն ու իրավունքը** **(2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար պարապմունք)**	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. ՈՒրարտական պետության կազմավորումը: 2. ՈՒրարտուի հասարակական կարգը: 3. ՈՒրարտուի պետական կարգը: 4. ՈՒրարտական իրավունքը: Բանակը ՈՒրարտուի պետական համակարգում	Հարցեր 1-4 - անցկացվում է դասախոսություն: Հարցեր 2-3 - ինքնուրույն աշխատանք. սովորողներն ուսումնասիրում են հարցերին առնչվող գրականությունը և դասախոսին ներկայացնում Ուրարտուի հասարակական կարգի և պետական կարգի առանձնահատկությունների վերաբերյալ իրենց դիտարկումները: Հարցեր 1-4 – անցկացվում է սեմինար պարապմունք, որի ընթացքում սովորողները ներկայացնում են Ուրարտուի հասարակական կարգը, պետությունն ու իրավունքը, ինքնուրույն աշխատանքի արդյունքները: Կատարվում է նրանց գիտելիքների ստուգում հարցման միջոցով:

Թեմա 5 **Հասարակական կարգն ու պետությունը հելլենիստական Հայաստանում** **(2 ժամ դասախոսություն)**	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Հայաստանը 6-4-րդ դ.դ. մ.թ.ա. (պատմական ակնարկ): 2. Հասարակական կարգը ու կառավարման համակարգը Հայաստանում մ.թ.ա. 6-4--րդ դարերում: 3. Հելլենիստական Հայաստանի հասարակական կարգը: 4. Հելլենիստական Հայաստանի պետական կարգը: 5. Հելլենիստական Հայաստանի կառավարման համակարգը: 6. Հելլենիստական Հայաստանի իրավունքը: 7. Քաղաքները հելլենիստական Հայաստանի պետական համակարգում: 8. Բանակը հելլենիստական Հայաստանի պետական համակարգում:	Հարցեր 1-8 - անցկացվում է դասախոսություն: Հարցեր 3-5 - ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են գրականությանը, ուսումնասիրում հելլենիստական Հայաստանի հասարակական կարգը, պետական կարգը և կառավարման համակարգը:

Թեմա 6 **Հասարակական կարգը, պետությունն ու իրավունքը վաղ ավատատիրության շրջանի Հայաստանում** **(2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար պարապմունք)**	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Հասարակական կարգն ու հողային հարաբերությունները վաղ ավատատիրական Հայաստանում: 2. Ավատատեր նախարարներն ու թագավորական իշ-	Հարցեր 1-7 - անցկացվում է դասախոսություն: Հարցեր 4-5 - ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են անհրաժեշտ գրակա-

խանությունը վաղ ավատատիրական Հայաստանում: 3. Իրավունքի հիերարխիկ (աստիճանակարգային) բնույթը և կառավարման համակարգը վաղ ավատատիրության շրջանի Արշակունյաց Հայաստանում: 4. Աշտիշատի և Շահապիվանի եկեղեցական ժողովների որոշումները որպես վաղ ավատատիրական Հայաստանի կանոնական և աշխարհիկ իրավունքի աղբյուր: 5. Հովհան Օձնեցու «Կանոնագիրք Հայոց»-ի իրավագիտական նշանակությունը: 6. Իրավունքի աշխարհիկ աղբյուրները վաղ ավատատիրական Հայաստանում: 7. Իրավունքի հիմնական ճյուղերի առանձնահատկությունները ավատատիրական Հայաստանում:	նությանը և դասախոսին ներկայացնում Աշտիշատի ու Շահապիվանի եկեղեցական ժողովների որոշումների բովանդակությունը, վերլուծում Հովհան Օձնեցու «Կանոնագիրք Հայոց»-ի իրավագիտական նշանակությունը: Հարցեր 1-7 – անցկացվում է սեմինար պարապմունք, որի ընթացքում սովորողները ներկայացնում են վաղ ավատատիրության շրջանի Հայաստանի հասարակական կարգը, պետությունն ու իրավունքը, ինքնուրույն աշխատանքի արդյունքները: Կատարվում է սովորողների գիտելիքների ստուգում հարցման միջոցով:

Թեմա 7 **Հասարակական կարգը և իրավունքը Հայաստանում 6-րդ դարում** **(2 ժամ դասախոսություն)**	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Հուստինիանոս 1-ինի ռազմական ու վարչական վերափոխումները Արևմտյան Հայաստանում: 2. Ժառանգության վերաբերյալ Հուստինիանոս 1-ինի վերափոխումները Արևմտյան Հայաստանում:	Հարցեր 1-2 - անցկացվում է դասախոսություն: Հարց 1 - ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են գրականությանը, առավել խորը ուսումնասիրում Արևմտյան Հայաստանում Հուստինիանոս 1-ինի կողմից իրականացված ռազմական ու վարչական բարեփոխումները:

Թեմա 8 **Հասարակական կարգը և իրավունքը Հայաստանում արաբական տիրապետության շրջանում** **(2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար պարապմունք)**	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Կառավարման համակարգը Հայաստանում արաբական տիրապետության շրջանում: 2. Հողային իրավունքը Հայաստանում արաբական տիրապետության շրջանում: 3. Հարկային քաղաքականության բնույթն ու իրավական խտրականությունը Հայաստանում արաբական տիրապետության շրջանում:	Հարցեր 1-3 - անցկացվում է դասախոսություն: Հարց 1 - ինքնուրույն աշխատանք. սովորողները ծանոթանում են անհրաժեշտ գրականությանը և դրա վերլուծության հիման վրա դասախոսին ներկայացնում արաբական տիրապետության շրջանում Հայաստանի կառավարման համակարգի վերաբերյալ մոտեցումները և այդ կապակցությամբ սեփական դիրքորոշումները: Հարցեր 1-3 – անցկացվում է սեմինար պարապմունք: Սովորողների հարցման, ինչպես նաև՝ խմբային քննարկման միջոցով կատարվում է դասավանդված նյութի և ինքնուրույն աշխատանքի արդյունքների ամփոփում, պարզվում է դրանց յուրացման աստիճանը:

Թեմա 9 **Պետական կարգն ու հասարակական հարաբերությունները Հայաստանում Բագրատունյաց թագավորության շրջանում** **(2 ժամ դասախոսություն)**	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման**

	մեթոդաբանություն
1. Ավատատիրական դասային հարաբերությունները Բագրատունյաց Հայաստանում: 2. Բագրատունյաց Հայաստանի կառավարման համակարգը: 3. Գյուղացիության իրավական վիճակը և հարկային քաղաքականությունը Բագրատունյաց Հայաստանում (10-13-րդ դդ.): 4. Քաղաքների դերը և բանակը Բագրատունյաց Հայաստանում:	Հարցեր 1-4 - անցկացվում է դասախոսություն: Հարց 2 - ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են անհրաժեշտ գրականությանը, վերլուծում Բագրատունյաց Հայաստանի կառավարման համակարգի առանձնահատկությունները:

Թեմա 10 **Հասարակական կարգը և պետությունը Կիլիկյան Հայաստանում** **(2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար պարապմունք)**	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Կիլիկյան հայկական պետության առաջացումը: 2. Կիլիկյան Հայաստանի հասարակական կարգը: 3. Կիլիկյան Հայաստանի պետական կարգը: 4. Կիլիկյան Հայաստանի կառավարման համակարգը: 5. Դատական համակարգը և միջազգային իրավունքի նորմերի կիրառման առանձնահատկությունները Կիլիկյան Հայաստանում:	Հարցեր 1-5 - անցկացվում է դասախոսություն: Հարցեր 2, 3 - ինքնուրույն աշխատանք. սովորողները ծանոթանում են Կիլիկյան Հայաստանի հասարակական և պետական կարգի առանձնահատկություններին, ներկայացնում իրենց դիրքորոշումները նշված հարցերի կապակցությամբ: Հարցեր 1-5 – սեմինար պարապմունք: Սովորողների հարցման, ինչպես նաև խմբային քննարկման միջոցով կատարվում է դասավանդված նյութի և ինքնուրույն աշխատանքի արդյունքների ամփոփում, պարզվում է դրանց յուրացման աստիճանը:

Թեմա 11 **Զարգացած ավատատիրական Հայաստանի իրավունքի աղբյուրները և ճյուղերը** **(2 ժամ դասախոսություն)**	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Դավիդ Ալավկաորդու «Կանոնական օրենսդրության» իրավագիտական նշանակությունը: 2. Ներսես Շնորհալու «Թուղթ ընդհանրական»-ի իրավագիտական նշանակությունը: 3. Մխիթար Գոշի «Դատաստանագիրք»-ը: 4. Ամուսնաընտանեկան իրավահարաբերությունների սկզբունքները և քրեական իրավունքը զարգացած ավատատիրական ժամանակաշրջանում: 5. Ս. Սպարապետի (Գունդստաբլի) Դատաստանագրքի կառուցվածքը: 6. Իրավունքի զարգացման փուլերը ըստ Ս. Սպարապետի: Ընտանեկան ու քաղաքացիական իրավահարաբերությունների կարգավորումը նրա դատաստանագրքում: 7. Քրեական իրավունքի հիմնահարցերը Ս. Սպարապետի Դատաստանագրքում: 8. Քրեական իրավունքի հիմնահարցերը զարգացած ավատատիրական Հայաստանում:	Հարցեր 1-11 - անցկացվում է դասախոսություն: Հարցեր 3, 5, 11 - ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են անհրաժեշտ գրականությանը, վերլուծում Մխիթար Գոշի և Ս. Սպարապետի (Գունդստաբլի) դատաստանագրքերի կառուցվածքը, բովանդակությունը, առավել խորը ուսումնասիրում են զարգացած ավատատիրական Հայաստանի դատական համակարգը, դատարանակազմությունն ու դատավարությունը:

9. Քրեական իրավունքը Հայաստանում 11-13-րդ դարերում: 10. Ամուսնության իրավական կարգավորումը և ընտանիքի անդամների գույքային իրավահարաբերությունները զարգացած ավատատիրական Հայաստանում: 11. Դատական համակարգը, դատարանակազմությունն ու դատավարությունը զարգացած ավատատիրական Հայաստանում:	

Թեմա 12 **Պետաիրավական խնդիրները Հայաստանի ազատագրության 18-րդ դարի 2-րդ կեսի ծրագրերում** **(2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար պարապմունք)**	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Պետականության վերականգման հիմնահարցերը Մ. Բաղրամյանի «Նոր տետրակ, որ կոչի հորդորակ» աշխատությունում և պետության կառավարման ձևի ու հասարակության մեջ օրենքի դերի հիմնախնդիրները Շ. Շահամիրյանի «Որոգայթ փառաց»-ում: 2. Հայոց պետականության վերականգնման Մովսես Սարաֆյանի ծրագիրը: 3. Ազգային պետականության վերականգնման հիմնահարցերը Հ. Արղությանի և Շ. Շահամիրյանի ծրագրերում:	Հարցեր 1-3 - անցկացվում է դասախոսություն: Հարց 2 - ինքնուրույն աշխատանք. սովորողները առավել մանրամասն ծանոթանում են հայոց պետականության վերականգնման Մովսես Սարաֆյանի ծրագրին, ներկայացնում իրենց դիրքորոշումները դրա կապակցությամբ: Հարցեր 1-3 – սեմինար պարապմունք: Սովորողների հարցման, ինչպես նաև խմբային քննարկման միջոցով կատարվում է դասավանդված նյութի և ինքնուրույն աշխատանքի արդյունքների ամփոփում, պարզվում է դրանց յուրացման աստիճանը:

Թեմա 13 **Իրավական կարգը, հասարակական հարաբերություններն ու վարչական բաժանումները Արևելյան Հայաստանում Ռուսաստանին միանալուց հետո** **(2 ժամ դասախոսություն)**	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Երևանի ժամանակավոր վարչությունը որպես կառավարման ռազմավարչական մարմին: Արևելյան Հայաստանի ինքնավարության նախագիծը: 2. Հայկական մարզի ստեղծումը: 1836 թ. մարտի 11-ի եկեղեցական կանոնադրությունը: 3. Վարչաիրավական վերափոխումները Արևելյան Հայաստանում 1840-1850-ական թթ.:	Հարցեր 1-3 - անցկացվում է դասախոսություն: Հարց 3 - ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են անհրաժեշտ գրականությանը, վերլուծում 1840-1850-ական թթ. Արևելյան Հայաստանում իրականացված վարչաիրավական վերափոխումների հիմնական ուղղությունները:

Թեմա 14 **Արևմտահայերի ազգային Սահմանադրությունը** **(2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար պարապմունք)**	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Արևմտահայերի ազգային Սահմանադրությունը:	Հարց 1 - անցկացվում է դասախոսություն: Հարց 1 - ինքնուրույն աշխատանք. սովորողները առավել մանրամասն ծանոթանում են արևմտահայերի ազգային Սահմանադրության բո-

	վանդակությանը, ներկայացնում իրենց դիրքորոշումները դրա կապակցությամբ: Հարց 1 – սեմինար պարապմունք: Սովորողների հարցման, ինչպես նաև խմբային քննարկման միջոցով կատարվում է դասավանդված նյութի և ինքնուրույն աշխատանքի արդյունքների ամփոփում, պարզվում է դրանց յուրացման աստիճանը:

Թեմա 15 **1860-1870-ական թթ. ռեֆորմների ընթացքը Արևելյան Հայաստանում** **(2 ժամ դասախոսություն)**	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Արևելյան Հայաստանում 1870 թ. մայիսի 14-ի գյուղացիական ռեֆորմը: 2. Բուրժուական լրացուցիչ բարեփոխումները Արևելյան Հայաստանում:	Հարցեր 1-2 - անցկացվում է դասախոսություն: Հարց 1 - ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են անհրաժեշտ գրականությանը, վերլուծում 1870 թ. մայիսի 14-ին Արևելյան Հայաստանում իրականացված գյուղացիական ռեֆորմի ընթացքը և արդյունքները:

Թեմա 16 **Հայկական հարցը՝ որպես միջազգային իրավունքի հիմնախնդիր** **(2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար պարապմունք)**	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Հայկական հարցը՝ որպես միջազգային իրավունքի հիմնախնդիր:	Հարց 1 - անցկացվում է դասախոսություն: Հարց 1 - ինքնուրույն աշխատանք. սովորողները առավել մանրամասն ծանոթանում են Հայկական հարցի՝ որպես միջազգային իրավունքի հիմնախնդրի բովանդակությանը, ներկայացնում իրենց դիրքորոշումները դրա կապակցությամբ: Հարց 1 – սեմինար պարապմունք: Սովորողների հարցման, ինչպես նաև խմբային քննարկման միջոցով կատարվում է դասավանդված նյութի և ինքնուրույն աշխատանքի արդյունքների ամփոփում, պարզվում է դրանց յուրացման աստիճանը:

Թեմա 17 **Վարչաիրավական բարեփոխումների խնդիրն Արևմտյան Հայաստանում 1912-1914 թթ.** **(2 ժամ դասախոսություն)**	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Վարչաիրավական բարեփոխումների խնդիրն Արևմտյան Հայաստանում 1912-1913 թթ.: Մանդելշտամի ծրագիրը: 2. Արևմտյան Հայաստանում վարչաիրավական բարեփոխումների խնդիրը 1914 թ. ռուս-թուրքական համաձայնագրում:	Հարցեր 1-2 - անցկացվում է դասախոսություն: Հարց 1 - ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են անհրաժեշտ գրականությանը, վերլուծում 1912-1913 թթ. Արևմտյան Հայաստանում վարչաիրավական բարեփոխումների հիմնախնդիրը, առավել մանրամասն ծանոթանում Մանդելշտամի ծրագրին:

Թեմա 18 **Պետաիրավական կացությունը Հայաստանում Առաջին Հանրապետության շրջանում: Հասարակական կարգը և պետաիրավական կացությունը Հայաստանի խորհրդայնացումից հետո: Հայաստանի Հանրապետության անկախության հռչակումը (1991 թ.) և ազգային պետականության կայացման գործընթացը** **(2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար պարապմունք)**	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Պետականության կազմավորման գործընթացը Հայաստանի Առաջին Հանրապետությունում: ՀՀ զինված ուժերը պետական համակարգում: 2. Իշխանության մարմինների ձևավորումը խորհրդային Հայաստանում: ՀԽՍՀ առաջին Սահմանադրության (1922 թ.) դերը համայնավարական իրավակարգի ձևավորման գործում: 3. Անդրկովկասյան ֆեդերացիայի և ԽՍՀՄ կազմավորումը: Խորհրդային Հայաստանի 1937 թ. Սահմանադրության դերը սոցիալիստական իրավակարգի ամրապնդման գործում: 4. Հայաստանի անկախության հռչակագիրը (1990 թ. օգոստոսի 23) որպես ինքնիշխան պետականության ստեղծման գործընթացի իրավական սկիզբ: Անկախության հանրաքվեի իրավական նշանակությունը: 5. Հայաստանի Երրորդ Հանրապետության տնտեսության ազատականացմանը միտված պետաիրավական միջոցառումները: 6. Հայաստանի Երրորդ Հանրապետության կառավարման համակարգը և պետական շինարարության գործընթացը: 7. Հայաստանի Երրորդ Հանրապետության հասարակական-քաղաքական կյանքի ազատականացման ուղղված պետաիրավական միջոցառումները: 8. Հայաստանի Երրորդ Հանրապետությունը որպես միջազգային իրավահարաբերությունների սուբյեկտ:	Հարցեր 1-8 - անցկացվում է դասախոսություն: Հարցեր 1, 2, 4- ինքնուրույն աշխատանք. սովորողները առավել մանրամասն ծանոթանում են Հայաստանի Առաջին Հանրապետությունում պետականության կազմավորման գործընթացին, խորհրդային Հայաստանում իշխանության մարմինների ձևավորմանը, Հայաստանի անկախության հռչակագրի (1990 թ. օգոստոսի 23) բովանդակությանը, ներկայացնում իրենց դիրքորոշումները դրանց կապակցությամբ: Հարցեր 1-8 – սեմինար պարապմունք: Սովորողների հարցման, ինչպես նաև խմբային քննարկման միջոցով կատարվում է դասավանդված նյութի և ինքնուրույն աշխատանքի արդյունքների ամփոփում, պարզվում է դրանց յուրացման աստիճանը:

Հարցաշար

«Հայաստանի պետության և իրավունքի պատմություն» դասընթացի քննության

1.Հայաստանի պետության և իրավունքի պատմությունը որպես իրավաբանական գիտություն և նրա առարկան
2. Հայաստանի պետության և իրավունքի պատմության կապը մյուս իրավաբանական գիտությունների հետ
3. Հայաստանի պետության և իրավունքի պատմության առարկայի հիմնական հասկացությունները, կատեգորիաները, ուսումնասիրման մեթոդները, շրջաբաժանումը
4.Տոհմատիրական կարգերի քայքայումը և մասնավոր սեփականության առաջացումը հայկական լեռնաշխարհում: Ռազմական դեմոկրատիա
5. Հնագույն պետական կազմավորումները և նրանց հասարակական կարգը
6.Պետության և իրավունքի ծագումը Հայկական լեռնաշխարհում
7.Սովորութային իրավունքը որպես պոզիտիվ իրավունքի նախնական աղբյուր
8.Հռոմեա-բյուզանդական իրավունքը
9.Հնագույն, հին ու միջնադարյան Հայաստանի իրավունքի հուշարձանների ընդհանուր բնութագիրն ու համակարգումը
10.ՈՒրարտական պետության կազմավորումը
11.ՈՒրարտուի հասարակական կարգը
12.ՈՒրարտուի պետական կարգը
13.ՈՒրարտական իրավունքը: Բանակը ՈՒրարտուի պետական համակարգում
14.Հայաստանը 6-4 -րդ դ.դ. մ.թ.ա. (պատմական ակնարկ)
15.Հասարակական կարգը ու կառավարման համակարգը Հայաստանում մ.թ.ա. 6-4-րդ դարերում
16.Հելլենիստական Հայաստանի հասարակական կարգը
17.Հելլենիստական Հայաստանի պետական կարգը
18.Հելլենիստական Հայաստանի կառավարման համակարգը
19.Հելլենիստական Հայաստանի իրավունքը
20.Քաղաքները հելլենիստական Հայաստանի պետական համակարգում
21.Բանակը հելլենիստական Հայաստանի պետական համակարգում
22.Հասարակական կարգն ու հողային հարաբերությունները վաղ ավատատիրական Հայաստանում
23.Ավատատեր նախարարներն ու թագավորական իշխանությունը վաղ ավատատիրական Հայաստանում
24.Իրավունքի հիերարխիկ (աստիճանակարգային) բնույթը և կառավարման համակարգը վաղ ավատատիրության շրջանի Արշակունյաց Հայաստանում
25.Աշտիշատի և Շահապիվանի եկեղեցական ժողովների որոշումները որպես վաղ ավատատիրական Հայաստանի կանոնական և աշխարհիկ իրավունքի աղբյուր
26.Հովհան Օձնեցու «Կանոնագիրք Հայոց»-ի իրավագիտական նշանակությունը
27.Իրավունքի աշխարհիկ աղբյուրները վաղ ավատատիրական Հայաստանում
28.Իրավունքի հիմնական ճյուղերի առանձնահատկությունները ավատատիրական Հայաստանում
29.Հուստինիանոս 1-ինի ռազմական ու վարչական վերափոխումները Արևմտյան Հայաստանում
30.Ժառանգության վերաբերյալ Հուստինիանոս 1-ինի վերափոխումները Արևմտյան Հայաստանում
31.Կառավարման համակարգը Հայաստանում արաբական տիրապետության շրջանում
32.Հողային իրավունքը Հայաստանում արաբական տիրապետության շրջանում
33.Հարկային քաղաքականության բնույթն ու իրավական խտրականությունը Հայաստանում արաբական տիրապետության շրջանում
34.Ավատատիրական դասային հարաբերությունները Բագրատունյաց Հայաստանում
35.Բագրատունյաց Հայաստանի կառավարման համակարգը

36.Գյուղացիության իրավական վիճակը և հարկային քաղաքականությունը Բագրատունյաց Հայաստանում (10-13-րդ դդ.)
37.Քաղաքների դերը և բանակը Բագրատունյաց Հայաստանում
38.Կիլիկյան հայկական պետության առաջացումը
39.Կիլիկյան Հայաստանի հասարակական կարգը
40.Կիլիկյան Հայաստանի պետական կարգը
41.Կիլիկյան Հայաստանի կառավարման համակարգը
42.Դատական համակարգը և միջազգային իրավունքի նորմերի կիրառման առանձնահատկությունները Կիլիկյան Հայաստանում
43.Դավիդ Ալավկաորդու «Կանոնական օրենսդրության» իրավագիտական նշանակությունը
44.Ներսես Շնորհալու «Թուղթ ընդհանրական»-ի իրավագիտական նշանակությունը
45.Մխիթար Գոշի «Դատաստանագիրք»-ը
46.Ամուսնաընտանեկան իրավահարաբերությունների սկզբունքները և քրեական իրավունքը զարգացած ավատատիրական ժամանակաշրջանում
47.Ս. Սպարապետի (Գունդստաբլի) Դատաստանագրքի կառուցվածքը
48.Իրավունքի զարգացման փուլերը ըստ Ս. Սպարապետի: Ընտանեկան ու քաղաքացիական իրավահարաբերությունների կարգավորումը նրա դատաստանագրքում
49.Քրեական իրավունքի հիմնահարցերը Ս.Սպարապետի Դատաստանագրքում
50.Քրեական իրավունքի հիմնահարցերը զարգացած ավատատիրական Հայաստանում
51.Քրեական իրավունքը Հայաստանում 11-13-րդ դարերում
52.Ամուսնության իրավական կարգավորումը և ընտանիքի անդամների գույքային ի-րավահարաբերությունները զարգացած ավատատիրական Հայաստանում
53.Դատական համակարգը, դատարանակազմությունն ու դատավարությունը զարգացած ավատատիրական Հայաստանում
54.Պետականության վերականգման հիմնահարցերը Մ. Բաղրամյանի «Նոր տետրակ, որ կոչի հորդորակ» աշխատությունում և պետության կառավարման ձևի ու հասարակության մեջ օրենքի դերի հիմնախնդիրները Շ. Շահամիրյանի «Որոգայթ փառաց»-ում
55.Հայոց պետականության վերականգնման Մովսես Սարաֆյանի ծրագիրը
56.Ազգային պետականության վերականգնման հիմնահարցերը Հ. Արղությանի և Շ. Շահամիրյանի ծրագրերում
57.Երևանի ժամանակավոր վարչությունը որպես կառավարման ռազմավարչական մարմին: Արևելյան Հայաստանի ինքնավարության նախագիծը
58.Հայկական մարզի ստեղծումը: 1836 թ. մարտի 11-ի եկեղեցական կանոնադրությունը
59.Վարչաիրավական վերափոխումները Արևելյան Հայաստանում 1840-1850-ական թթ.
60.Արևմտահայերի ազգային Սահմանադրությունը
61.Արևելյան Հայաստանում 1870 թ. մայիսի 14-ի գյուղացիական ռեֆորմը
62.Բուրժուական լրացուցիչ բարեփոխումները Արևելյան Հայաստանում
63.Հայկական հարցը՝ որպես միջազգային իրավունքի հիմնախնդիր
64.Վարչաիրավական բարեփոխումների խնդիրն Արևմտյան Հայաստանում 1912-1913 թթ.: Մանդելշտամի ծրագիրը
65.Արևմտյան Հայաստանում վարչաիրավական բարեփոխումների խնդիրը 1914 թ. ռուս-թուրքական համա-ձայնագրում
66.Պետականության կազմավորման գործընթացը Հայաստանի Առաջին Հանրապետությունում: ՀՀ զինված ուժերը պետական համակարգում
67.Իշխանության մարմինների ձևավորումը խորհրդային Հայաստանում: ՀԽՍՀ առաջին Սահմանադրության (1922 թ.) դերը համայնավարական իրավակարգի ձևավորման գործում

68.Անդրկովկասյան ֆեդերացիայի և ԽՍՀՄ կազմավորումը: Խորհրդային Հայաստանի 1937թ. Սահմանադրության դերը սոցիալիստական իրավակարգի ամրապնդման գործում
69.Հայաստանի անկախության հռչակագիրը (1990թ. օգոստոսի 23) որպես ինքնիշխան պետականության ստեղծման գործընթացի իրավական սկիզբ: Անկախության հանրաքվեի իրավական նշանակությունը
70.Հայաստանի Երրորդ Հանրապետության տնտեսության ազատականացմանը միտված պետաիրավական միջոցառումները
71.Հայաստանի Երրորդ Հանրապետության կառավարման համակարգը և պետական շինարարության գործընթացը
72.Հայաստանի Երրորդ Հանրապետության հասարակական-քաղաքական կյանքի ազատականացման ուղղված պետաիրավական միջոցառումները
73.Հայաստանի Երրորդ Հանրապետությունը որպես միջազգային իրավահարաբերությունների սուբյեկտ